ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱԴԻԲԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի h.24 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԴԻԲԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Ադիբեկ Գրիգորյանը ծնվել է 1922թ. մարտի 25-ին, Ապարան համայնքի Թթուջուր գյուղում:

1938-1942թթ. մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի Թերլեմեզյանի անվան նկարչական գունանկարի բաժնում:

1942-1945թթ. Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է Սովետական բանակի շարքերում: Պատերազմից հետո ուսանել է Երևանի գեղարվեստի ինստիտուտի (1945-1951թթ.) քանդակի նորաբաց ամբիոնում՝ Արա Սարգսյանի և Սուրեն Ստեփանյանի մոտ:

1946-1951թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է Երևանի տիկնիկային թատրոնում՝ որպես բեմադրող նկարիչ: Ուսումն ավարտելուց հետո դասավանդել է Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանի քանդակի ամբիոնում, որպես քանդակի և կոմպոզիցիայի դասատու՝ ընդհուպ մինչև մահվան օրը:

Ադիբեկ Բալաբեկի Գրիգորյանն իր երկարատև տարիների ստեղծագործական գործունեությունը սկսել է 1948 թվականից՝ դեռ լինելով Երևանի գեղարվեստի ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանող, մասնակցել է բոլոր հանրապետական և համիամիութենական ցուցահանդեսներին՝ նեկայացրել է բազմաթիվ ստեղծագործություններ, արժանացել բարձր գնահատականների և մրցանակների: Նրա աշխատանքները բազմիցս ցուցադրվել են Խորհրդային միության տարբեր հանրապետություններում, Եվրոպական մայրաքաղաքներում, Հավանայում (Կուբա), Մոնրեալում (Կանադա) և Տոկիոյում (Ճապոնիա):

1972թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր նկարչի կոչմանը: Ստեղծագործել է կոմպոզիցիայի, դիմաքանդակի և մոնումենտալ քանդակի բնագավառներում:

Ադիբեկ Գրիգորյանը մահացել է 1996թ. մարտի 16-ին, Երևանում;

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի հ.24 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյան կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ